



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

«29» հոկտեմբերի 2012 թ.

թիվ 924-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 25-Ի ԹԻՎ 265-Ն ՀՐԱՄԱՅՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի մայիսի 23-ի թիվ 450-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 12-րդ կետի 4-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2009 թվականի մարտի 25-ի «Հիցենզավորման հանձնաժողովների կանոնադրությունները հաստատելու, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 418, 2002 թվականի ապրիլի 29-ի թիվ 329, 2007 թվականի փետրվարի 16-ի թիվ 161-Ն հրամաններն ամբողջությամբ և 2001 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 517 հրամանը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 265-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրության»՝

ա. 8-րդ կետում «մամուլում» բառից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջում» բառերը:

բ. 13-րդ կետից հետո լրացնել նոր 13.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«13.1. Հանձնաժողովի նիստում հարցերի քննարկման արդյունքում կազմվում է հանձնաժողովի եզրակացություն, որտեղ նշվում է.

1) հիմքը, որի հիման վրա հանձնաժողովի նիստում քննարկվում է հարցը,

2) հարցի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները,

3) իրավական հիմքերը, որոնց հիման վրա կայացվում է որոշումը,

4) հանձնաժողովի վերջնական եզրակացությունը: >>:

գ. 17-րդ կետը լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

<<Հարցերի քննարկման ողջ ընթացքի ձայնագրությունը պահպանվում է 3 տարի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալությունում: >>:

դ. 19-րդ կետը լրացնել նոր 7), 8), 9), 10) և 11) ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

<<7) անհրաժեշտության դեպքում լիցենզավորման փաթեթները հանձնաժողովի նիստից առնվազն 7 օր առաջ տրամադրում է հանձնաժողովի անդամներին,

8) հանձնաժողովի նիստից 1 օր առաջ լիցենզավորման փաթեթների հակիրճ բովանդակությունը և դրանց վերաբերյալ շահագրգիռ ստորաբաժանումների կարծիքները տրամադրում է հանձնաժողովի անդամներին,

9) հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, ժամկետի և օրակարգում ընդգրկված հարցերի մասին հանձնաժողովի նիստից առնվազն 5 օր առաջ գրավոր կամ բանավոր տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին,

10) հանձնաժողովի նիստի ժամանակ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հանձնաժողովի կողմից որոշում կայացնելուց հետո պատրաստում է եզրակացություն և ապահովում է հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից դրա ստորագրումը,

11) հանձնաժողովի եզրակացությունը հանձնում է հրավիրված անձին կամ նիստի ավարտից հետո պատշաճ ձևով ուղարկում է նրան: >>:

2) Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրված լիցենզիաների գործողության կասեցման և դադարեցման համար եզրակացություններ տվող հանձնաժողովի կանոնադրության>>՝

ա. 8-րդ կետում <<մամուլում>> բառից հետո լրացնել <<և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջում>> բառերը:

բ. 13-րդ կետից հետո լրացնել նոր 13.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<13.1. Հանձնաժողովի նիստում հարցերի քննարկման արդյունքում կազմվում է հանձնաժողովի եզրակացություն, որտեղ նշվում է.

1) հիմքը, որի հիման վրա հանձնաժողովի նիստում քննարկվում է հարցը,

2) հարցի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները,

3) իրավական հիմքերը, որոնց հիման վրա կայացվում է որոշումը,

4) հանձնաժողովի վերջնական եզրակացությունը: >>:

գ. 17-րդ կետի 2-րդ պարբերությունում <<տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնում>> բառերը փոխարինել <<լիցենզավորման գործակալությունում>> բառերով:

դ. 19-րդ կետը լրացնել նոր 7), 8), 9), 10) և 11) ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

<<7) անհրաժեշտության դեպքում լիցենզավորման փաթեթները հանձնաժողովի նիստից առնվազն 7 օր առաջ տրամադրում է հանձնաժողովի անդամներին,

8) հանձնաժողովի նիստից 1 օր առաջ լիցենզավորման փաթեթների հակիրճ բովանդակությունը և դրանց վերաբերյալ շահագրգիռ ստորաբաժանումների կարծիքները տրամադրում է հանձնաժողովի անդամներին,

9) հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, ժամկետի և օրակարգում ընդգրկված հարցերի մասին հանձնաժողովի նիստից առնվազն 5 օր առաջ գրավոր կամ բանավոր տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին,

10) հանձնաժողովի նիստի ժամանակ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հանձնաժողովի կողմից որոշում կայացնելուց հետո պատրաստում է եզրակացություն և ապահովում է հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից դրա ստորագրումը,

11) եզրակացությունը հանձնում է հրավիրված անձին կամ նիստի ավարտից հետո պատշաճ ձևով ուղարկում է նրան.>>:

3) Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված <<Վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրության>>՝

ա. 8-րդ կետում <<մամուլում>> բառից հետո լրացնել <<և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջում>> բառերը:

բ. 13-րդ կետից հետո լրացնել նոր 13.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<13.1. հանձնաժողովի նիստում հարցերի քննարկման արդյունքում կազմվում է հանձնաժողովի եզրակացություն, որտեղ նշվում է՝

1) հիմքը, որի հիման վրա հանձնաժողովի նիստում քննարկվում է հարցը,

2) հարցի քննարկմանը մասնակցող անձանց բացատրությունները, նրանց միջնորդությունները և դրանց քննարկման արդյունքները,

3) իրավական հիմքերը, որոնց հիման վրա կայացվում է որոշումը,

4) հանձնաժողովի վերջնական եզրակացությունը:>>:

գ. 17-րդ կետի 2-րդ պարբերությունում <<տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնում>> բառերը փոխարինել <<լիցենզավորման գործակալությունում>> բառերով:

դ. 19-րդ կետը լրացնել նոր 7), 8), 9), 10) և 11) ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

<<7) անհրաժեշտության դեպքում լիցենզավորման փաթեթները հանձնաժողովի նիստից առնվազն 7 օր առաջ տրամադրում է հանձնաժողովի անդամներին,

8) հանձնաժողովի նիստից 1 օր առաջ լիցենզավորման փաթեթների հակիրճ բովանդակությունը և դրանց վերաբերյալ շահագրգիռ ստորաբաժանումների կարծիքները տրամադրում է հանձնաժողովի անդամներին,

9) հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, ժամկետի և օրակարգում ընդգրկված հարցերի մասին հանձնաժողովի նիստից առնվազն 5 օր առաջ գրավոր կամ բանավոր տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին,

10) հանձնաժողովի նիստի ժամանակ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հանձնաժողովի կողմից որոշում կայացնելուց հետո պատրաստում է եզրակացություն և ապահովում է հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից դրա ստորագրումը,

11) եզրակացությունը հանձնում է հրավիրված անձին կամ հանձնաժողովի նիստի ավարտից հետո պատշաճ ձևով ուղարկում է նրան:>>:



Վ. ԳԱՐԻԻԵԼՅԱՆ